

32/292

ՊԵՏԱԿԱՆ ԱՊԱՀՈՎԱԳՐՈՒԹՅՈՒՆ

~ 1154

32/292

ԲՈՒՑՍԵՐԻ ԱՊԱՀՈՎԱԳՐՈՒԹՅՈՒՆԸ
ԿԱՐԿՏԱՅԱՐՈՒԹՅՈՒՆՆԻՑ

ԹԱՐԳՄԱՆՈՒԹՅՈՒՆ ՌՈՒՍՆԵՐՆԻՑ

14/3P 2017


ՀԱՅԱՍՏԱՆԻ ՊԵՏԱԿԱՆ ԱՊԱՀՈՎԱԳՐՈՒԹՅՈՒՆ

ԲՈՒՑՍԵՐԻ ԱՊԱՀՈՎԱԳՐՈՒԹՅՈՒՆԸ
ԿԱՐԿՏԱՅԱՐՈՒԹՅՈՒՆՆԵՑ

ԹԵՐԳՄԵՆՈՒԹՅՈՒՆ ՌՈՒՍԵՐԵՆԻՑ

ՅԵՐԵՎԱՆ

1927



1-28189

ԲՈՒՅՍԵՐԻ ԱՊԱՀՈՎԱԳՐՈՒԹՅՈՒՆԸ
ԿԱՐԿՏԱՀԱՐՈՒԹՅՈՒՆԻՅ

Տաք ու տոթ որվանից հետո, սովորաբար
դետերի և լճերի վրա մենք նկատում ենք մա-
ռախուղ, վորը դանդաղորեն բարձրանում և
վերև:

Այդ գոլորշացումը, վորոշ բարձրության
հասներուց հետո, սառչում և և դառնում ջրի
կաթիլներ, թափվելով գետին վորպես անձա-
րև: Բայց յերբեմն, այդ գոլորշացումները,
բամինների շնորհիվ, բարձրանում են ավելի վե-
րևը 2-ից 3 վերստ, ուր անձրևային կաթիլ-
ները ցրտից սառչում են և թափվում գետին
վորպես կարկուտ:

Յերբեմն ուժեղ փոթորիկի հետ միասին
հեղեն ու կարկուտը մի քանի ժամվա ընթաց-
քում վոչնչացնում են 100.000 զեսյատին ցանք-
սեր: Այդպիսի փոթորիկներին գիտաւթյունը
անվանում է ցիկլոն: Ցիկլոնի բերած կար-
կուտը հավի, յերբեմն աղավնու ձվի մեծու-
թյամբ, բոլորովին վոչնչացնում և ցանքսերը
և յերբեմն ել սպանում դաշտում մանր անա-
սուններ:

Յուրաքանչյուր տարի ԽՍՀՄ կարկուտը
վոչնչացնում և (խփում և) մոտ հարյուր մի-

լինոն դեսյատին միայն ցանքս, չհաշվելով այ-
գիները, բանջարանոցները և մյուս բուսական
մշակույթները, վերոնք վնասվում են ավելի
քան ցանք-երը:

Լինում են տարիներ, յերբ կարկտահարու-
թյունը ավելի խոշոր վնասներ է պատճառում.
որինակ 30 տարի սրանից առաջ Դոնի չրջա-
նում և Հյուսիսային Կովկասում կարկտար
փոշնացրեց 2.000.000 դեսյատին հացահա-
տիկների ցանքսեր:

Վերջին չորս տարվա ընթացքում ԽՍՀՄ-
ում կարկտահար են յեղել մոտ 7.000.000 դե-
սյատին ցանքս: Այդ նշանակում է, վեր յուրա-
քանչյուր 100 դեսյատին ցանքսից, մոտ $2\frac{1}{2}$
դեսյատինը կարկտահար է յեղել: Յեթե այդ
վերածելու լինենք փթերի, կպարզվի, վոր
Միության մեջ, յուրաքանչյուր տարի գյու-
ղացիությունը կորցնում է մոտ 30.000.000
փութ հացահատիկ՝ իսկ վերջին 4 տարվա ըն-
թացքում (1922-1925 թ.) նա կորցրել է փոչ
պակաս 113.000.000 փութ:

Գյուղացիության գրպանը, յուրաքանչյուր
տարի կորցնում է 30.000.000 ուրլի կարկտա-
հարությունից, իսկ քանի քանի անտեսու-
թյուններ, կորցնում են իրենց բարեկեցու-
թյուն յերկար տարիներով: 800.000 անտեսու-
թյուններից, յուրաքանչյուր տարի մոտ 100
հազար անտեսությունը կորցնում է կարկտա-
հարությունից իր ամբողջ բերքը և՛ առանց
կոզմնակի ոգնության չի կաբող ապրել. իսկ

մնացած 700.000 անտեսությունը կորցնում է
համարյա թե իր բերքի կեսը:

Ամեն մի քայքայված կամ խաղտված տըն-
տեսություն, մեծ ցավ է պատճառում պետու-
թյանը. այդպիսի անտեսություններին պետք
է միջոցներ տալ սերմելու, յերբեմն ել միաս-
հարկից ազատելու:

Կարկտի դեմ պայքարել չի կարելի, բայց
կարկտահարության պատճառած վնասի դեմ
կարելի չէ պայքարել, ապահովագրության
ոգնությամբ:

Ապահովագրությունը փոխադարձ ոգնու-
թյուն է:

Ապահովագրությանը յուրաքանչյուրը վր-
ճարում է կոպեկներ, բայց այդ կոպեկներից
գոյանում է միլիոններ, վորոնք վերադարձ-
վում են նույն գյուղացիությանը, կարկտա-
հարության, հրդեհի, անասունների անկման
փնտները բավարարելու, բայց փոչ թե կո-
պեկներով, այլ տասնյակ և հարյուրավոր
ուրլիներով:

Խորհրդային իշխանությունը դեռ ևս 7
տարի սրանից առաջ, հողի համայնացման ո-
րենքում, մատնանչել է, վոր յուրաքանչյուր
աշխատանքային անտեսություն պետք է ապա-
հովագրված լինի բոլոր տեսակի դժբաղտու-
թյուններից—չենքերը կրակից, անասունները
անկումից և ցանքսերը կարկտից:

Հինգ տարի սրանից առաջ (1921 թ.) Խոր-

հրգային իշխանությունը սահմանեց զյուզացիութեան բարիքի ապահովագրութիւնը:

Շենքերի կրակից ապահովագրութեան և անասունների անկումից ապահովագրութեան մասին պատմված են ուրիշ զբօսյկներով, սույն զբօսյկով մենք խոսում ենք միայն ցանքսերի կարկտաարութիւնից ապահովագրութեան մասին:

Պետական ապահովագրութիւնը, կրճատ կերպով «Պետապ» վճարում է գյուղացիներին վոչ միայն կարկտաարութեան պատճառած վնասները, այլ և փոթորիկի և հեղեղի վնասները, յետե վերջինները առաջացել են կարկտաարութեան հետ միասին:

Ցանքսերի ապահովագրութիւնը լինում է 2 տեսակ. — պարտադիր կոպարային և կամավոր:

Պարտադիր ապահովագրութիւնը սահմանվում է այն դավառներում, ուր դավառական խորհուրդների համադրումարը կամ դավաործկոմը գտնում են անհրաժեշտ: Բայց յետե, փորեք դավառում սահմանված է բույսերի պարտադիր ապահովագրութիւն, ապա պետք է ապահովագրել բոլոր ցանքսերը, բացի պետութեան պատկանող ցանքսերից:

Պարտադիր կերպով ապահովագրվում են նաև այգիները, բանջարանոցները և այլ բույսերը, յետե այդ մասին կա կարգագրութիւն պետութեան կողմից:

Վորպեսզի ապահովագրեն ցանքսերը հար-

կավոր և ունենալ, յուրաքանչյուր գյուղում գյուղացիների ապահովագրական ցուցակ, առանց ցուցակագրական ցանկի չի կարելի գիտենալ, թե յուրաքանչյուր գյուղացին, վո՞րքան և ի՞նչ տեսակի ցանքս ունի և վո՞րքան պետք է ապահովագրին վերցնեն յուրաքանչյուրից: Ցուցակագրական ցանկերը պետք է կազմեն ոգոստոսին և սեպտեմբերին:

Պետութիւնը գյուղացիներին ի՞նչ միջոցներից պետք է վճարեր ապահովագրական վարձատրութիւն այրված տան, ընկած անասունին և կարկտաարված ցանքսին, յետե նրանցից չգանձեր մի քանի կոպեկներ:

Պետապը իր ապահովագրական տարին սկսում է հեկտեմբերի 1-ից: Գյուղացիութեան ամբողջ ցանքսերը հոկտեմբերի 1-ից համարվում են ապահովագրված: Ահա թե ինչո՞ւ Պետապը կանխապես հոգ է տանում, ցուցակագրական ցանկեր կազմելու ոգոստոս, սեպտեմբեր ամիսներին:

Ցուցակագրութիւնը կատարվում է հետեյալ կերպով:

Ամեն տարի, գյուղխորհուրդը կամ Պետապի գործակալը կազմում է յուրաքանչյուր գյուղի համար ցանքսատերերի անվանական ցուցակ: Ցուցակը կազմելիս, ամեն տարի ցանքսատերը պարտավոր է ցույց տալու գյուղխորհրդին կամ գործակալին յուր ցանքսի տարածութեան քանակութիւնը: Գարնանը ցանքսերի ստուգումը լինում է գյուղական ժո-

դովում. այդ ժողովում յուրաքանչյուր գյուղացի հայտնում է յուր ցանքսի տարածության մասին: Գործակալը կարող է ստուգել տեղում: Ցանքսի տարածությունը չպետք է լինի պակաս, քան ցույց տրված միասնարկի ցուցակում:

Գարնանը ստուգումից հետո պարզվում է կոպարի հավելումը կամ պակասորդը. յեթե առաջացել է հավելում, նա՛ պիտի հաշվել հետագա տարվա հաշվին, իսկ յեթե գոյացել է պակասորդ պետք է առհաշվարկել հետագա տարվա կոպարին: Հետևապես ամեն մի գյուղացի կարող է միշտ ել ուղղել ապահովագրական սխալը: Մենք խորհուրդ ենք տալիս գյուղացիներին պահանջել իշխանությունից գարնանը կատարելու ցանքսերի ստուգում և հետևանքի մասին կարդալ գյուղական ժողովում: Այն ժամանակ, ամեն մի գյուղացի կիմանա թե ցուցակում քանի դեպատին է գրված իր ցանքսը և կարկտահարության վնասը ստանալու դեպքում թյուրիմացություններ չեն լինի: Ամեն մեկը կստանա այն չափ, վորչափ ունի նա ցանքս: Չպետք է յերբեք բաժնել ցանքսի տարածությունը: Հաճախ լինում են դեպքեր, յերբ գյուղացիները զիտավորյալ կերպով փոքրացնում են իրանց ցանքսի տարածությունը:

ԱՅԳԻՆԵՐԻ, ԲԱՆՋԱՐԱՆՈՅՆԵՐԻ, ԾԱՌԱՏՈՒՆԿԵՐԻ ՅԵՎ ԱՅԼ ԳՅՈՒՂԱՏՆՏԵՍԱԿԱՆ ՄՇԱԿՈՒՅԹՆԵՐԻ ԱՊԱՀՈՎԱԳՐՈՒԹՅԱՆ ԿԱՐԳԸ

Ծառատունկերը (պարտեզները) կարկտահարությունից վնասվում են ամենից շատ ծաղկման շրջանում:

Կարկուտը խանգարում է նրանց փոչոտման և պտուղը լինում է շատ ավելի քիչ, քան, յեթե չվնասեր կարկուտը: Բայց շատերը այդ պատճառի մասին չեն ել մտածում:

Պարտադիր կերպով ապահովագրվում են ագրյունարեւական պարտեզները: Արդյունաբերական պարտեզներ պետք է համարել նրանք, վորոնց տարածությունը պակաս չէ 600 քառակուսի սաժենից և վորոնց միւրդը թեկուզ սահմանափակ չափով հանվում է չուկա:

Կապալով տրված բոլոր այգիները համարվում են արդյունաբերական:

Բանջարանոցներից ել ապահովագրվում են պարտադիր կերպով միայն արդյունաբերականները:

Փոքրիկ պարտեզները, բանջարանոցները և այգիները, վորոնք բավարարում են միայն բնտանիքի պետքերին, պարտադիր ապահովագրության յենթակա չեն: Բայց 100 քառ. սաժեն այգիները արդեն համարվում են արդյունաբերական, վորովհետեւ խաղողը միշտ ել ծախվում է ուրիշին:

Այգիները և պարտեզների ապահովության ժամանակ տարածությունը պետք է ճշտությամբ ցույց տալ: Ամեն մի այգետեր, այգե տարածությունը շատ լավ գիտե, վորովհետև կարող է չափել նույնիսկ քայլերով:

Այնտեղ, ուր այգիները, պարտեզները ու բանջարանոցները պարտադիր կերպով չեն ապահովագրվում, պետք է ապահովագրել կամավոր կերպով: Չե վոր կարկուտը այգիներին հասցնում է շատ զգալի և յերկարատև վնաս: Խաղողի վորթը (վազը), ուժեղ կարկուտահարությունից հազիվ կարողանում է ուղղվել միայն 3 տարուց հետո:

ՅԱՆՔՍԵՐԻ ԱՊԱՀՈՎԱԳՐԱԿԱՆ ՆՈՐՄԱՆԵՐԸ.

Ամեն մի գյուղացի պետք է գիտենա թե ի՞նչ գումարով է ապահովագրված իր ցանքը:

Հայաստանում սահմանված է հետևյալ նորմաները յուրաքանչյուր 1 գեսյատին ցանք-սի համար չալթուկ 50 ուր., բամբակ 80 ուրբլի, այգի 60 ուրբլի, ծխախոտ 80 ուրբլի, սերմահատներ (հացահատիկները) 20 ուրբլի: Այս ցուցակից յերեվում է, վոր Պետապը ապահովագրում է կարկտից վոչ լրիվ չափով այլ բերքի մի մասը:

Լավ կլիներ ապահովագրել ամբողջ բերքը, բայց ամեն մի գյուղացի գիտե, վոր մի տեղ բերքը լավ է լինում, մի ուրիշ տեղ վատ: Մինչև իսկ միևնույն գյուղում, մեկի մոտ

բերքը լավ է, մյուսինը վատ. մեկը լավ է մշակել ցանքսը, մյուսը վատ, մեկը ժամանակին է ցանել, մյուսը ուշ:

Հետևապես չի կարելի ապահովագրել ամեն մի գյուղացուն առանձին ըստ իր բերքի:

Ուրեմն հարկավոր է լինում հաշվել 1 գեսյատինից միջին բերքը ամբողջ շրջանի համար և սահմանել ապահովագրական գումար (նորմա), նկատի ունենալով այդ միջին բերքը: Ցանքը լրիվ կերպով ապահովագրելու բոլոր գյուղացիների ուժը չի պատի, չեն կարող վրձարել ապահովագիրը, կ'գոյանան խոշոր հետնույթներ:

Ուստի Պետապը յուր գոյության առաջին տարվանից սահմանեց սերմի նորման, յուրաքանչյուր գեսյատինին 10 ուրբլի, վորովհետև պետապը ուզում էր ապահովել կարկտահարության դեպքում գյուղացու ցանած սերմը—վոչ պակաս 10 փութ, 1 գեսյատինին (հաշվելով փութը 1 ուրբլի):

Սերմային նորման գյուղացուն ապահովում էր միայն բերքի չափով: Սերմային նորման անբավարար յերեվաց, վորովհետև կարկտահարությունը վոչնչացնում էր մեծ մասամբ բերքի կեսից ավելին, յերբեմն ել ամբողջ բերքը: Հետևապես հարկավոր էր բարձրացնել նորման մինչև 20 ուրբլի գեսյատինին, վորը և կատարեց պետապը: Այդ նորմայով գյուղացին ցանքսի կորստյան դեպքում կստանա վոչ թե միայն սերմը, այլ և միքիչ ել

ուսուցող համար: Ապահովագրական նորման
ինչպես ստացինք վերեվում հպետք և պակաս
լինի բերքի $\frac{1}{4}$ -ից և ավել բերքի կեսից:

Բայց տարիները իրար նման չեն: Բանը
միայն բերքը չի, այլ և հացի գինը: Բերքի
տարիներին, 1 դեպյատինի, միջին բերքը հաշ-
վում է 50-100 ուրբլի և ապահովագրական չա-
փը (նորման) կ'կազմի արժեքի քիչ մասը. իսկ
յերաչառ տարիներին ապահովագրական գումար-
ը կ'կազմի ավել մեծ քան բերքի արժեքը:

Այժմ ել կան տեղեր ուր դեպյատինի բերքը
հաշվում է 35-40 ուրբլի և ապահովագրական
գումարը 20 ուրբլի: Ուրեմն Պետապը ապահո-
վագրում է կեսը: Բայց այդպիսի տեղեր շատ
քիչ է, մեծավ մասամբ Պետապը- ապահովա-
գրում է բերքի արժեքի $\frac{1}{4}$ -ի չափով:

Նախապես փորոշել ապահովագրական նոր-
ման շատ դժվար է, փորովհետև ստաճույց պետք
է գիտենալ 1 դեպյատինի գույտ արդյունքը,
ինչպես և թե վորքան հաճախ այդ վայրում
տեղի յե ունենում կարկտահարություն և վոր-
չափ է լինում նրա պատճառած վնասը:

Պետապի նորմանները հաստատվում են աշ-
խատանքի և սրաշտպանության խորհրդի կող-
մից, բայց գավառական խորհուրդների համա-
գումարը կամ գավառի կամ համաձայն տե-
ղական պայմանների կարող է իջեցնել կամ
բարձրացնել այդ նորման, սակայն փոչ առնել
 $\frac{1}{5}$ մասի չափով. 20 ուրբլու փոխարեն սահմա-
նել 24 ուրբլի:

Յեթե- կրակուտը ամեն տեղ միանման վը-
նասեր ցանքսերը, այն ժամանակ ապահովա-
գրական վճարն ել միեմնույնը կ'լինի:

Իրականության մեջ կարկտահարությու-
նը մի քանի վայրերում լինում է 3-4 տարվանը
1 անգամ. մի ուրիշ տեղ 2 տարվանը 1 անգամ
և մի յերրորդ տեղ համարյա ամեն տարի:

Միության մեջ կան այնպիսի գյուղեր, ուր
կարկտահարությունը ամառվա ընթացքում
լինում է 2-ից 3 անգամ:

Մեղանում (Հայաստանում) լեռնոտ վայ-
րերում կան տեղեր ուր կարկուտ է տեղում,
տարվա ընթացքում 10-ից 14 անգամ:

Վորպեսզի ճիշտ գիտենալ թե վորտեղ է
հաճախ կամ սակավ լինում կարկտահարու-
թյուն, հարկավոր է յերկար տարիներ զբանցել
բոլոր դեպքերը և ապա միայն գուրս բերել
ճիշտ որերի թիվը տվյալ վայրի կարկտահա-
րության:

Գյուղացին հեշտությամբ կարող է հաշ-
վել թե վորքան պետք է մուծի ցանքսերի պար-
տադիր կոպարային ապահովագրության ապա-
հովաժնար յեթե նա նայի սույնին կցված աղ-
յուսակը:

Ապահովագրական վճարումը, ըստ պար-
տադիր կոպարային ապահովագրության բո-
լոր տեսակի բույսերի համար միեմնույն է:
Ամեն մի գյուղացի, փորը ապահովագրել է
իր ցանքսերը կոպարային ապահովագրության
կարգով ստանում է ապահովագրական ծանու-

ցաղեր, ուր տրված է թե նա վորքան պետք է վճարի կարկտահարությունից: Յեթե ծանուցադրի մեջ կա վորեմէ սխալ, պետք է անմիջապէս հայտնի Պետապի գործակալին կամ գանձողին և ցույց տա, թե ինչո՞ւմն է սխալը:

Ամեն մի գյուղացի կարող է իմանալ գործակալից թե ո՞ւմը և վո՞ր չափի արտոնություններ է տրվելու, — վորպէսզի հաշվի թե արդյոք իր տնտեսությունը ստանալու յետապահովագրական արտոնությունն թե վո՞չ:

Արտոնություն տրվում է ամենաչքավոր տնտեսություններին: Ամենաչքավոր տնտեսությունները ազատվում են բոլորովին ապահովավճարից. քիչ ունեւորներին պակասացվում է ապահովավճարը $\frac{1}{2}$ չափով: Կարմիր բանակայինների բնտանիքները ազատվում են $\frac{1}{3}$ չափով:

Կարկտահարության կոպարային պարտադիր ապահովագրության կոպարի գանձւոր կատարվում է մյուս տեսակի պարտադիր ապահովագրությունների վճարումների հետ միասին:

Կամավոր մուծման վերջնական ժամկետը նույնի, ինչ վոր մյուս կոպարային ապահովագրություններին:

Պետք է ապահովավճարը վճարել ժամանակին: Վերջին ժամկետը անցնելուց հետո, ապահովագրական վճարումներին ավելացվում է տույժ, վորովհետեւ չմուծված կոպարը դառնում է հետնույթ:

Տույժը բարդվում է այսպէս — ով ուշացրել է մեկ ամիս նա վճարում է 1 ուրբուն 6 կոպ. տույժ, ո՞վ ուշացրել է 2 ամիս, վճարում է ուրբուն 24 կոպեկ տույժ:

Ապահովագրական հետնույթը գանձվում է հարկադրական (վարչական) կարգով:

Մենք արդեն ասացինք թե ինչ է պարտավոր անելու Պետապը կարկտահարության ապահովագրության մասին:

Նույնպէս ասացինք թե ինչ է պարտավոր կատարելու, յուրաքանչյուր ցանքատեր, այն է 1) Ցանքատերը պարտավոր է ցույց տալու թե աշնանացանի և գարնանացանի տարածությունը. 2) Ցանքատերը պետք է յուր ժամանակին վճարի ապահովագրին:

Ի՞նչ պիտի անի ցանքատերը յետեւ կարկուտը խփում է, նա պետք է 3 օրվա ընթացքում հայտնի Պետապի գործակալին: Յերբեք չի պատահի, վոր կարկտահար լինի միայն մեկ տնտեսություն. միշտ ել կարկտահար է լինում ամբողջ դաշտը կամ նրա մի մասը: Բոլոր ցանքատերերին միասին պետապի գործակալի մոտ գնալու կարիք չկա: Կարող է միայն մեկը գնալ գործակալի մոտ, կամ հայտնի գյուղ խորհրդին: Գյուղխորհուրդը պարտավոր է անմիջապէս հայտնել գործակալին: Յեթե կարկտահարությունը յեղել է գարնանը, ապրիլ կամ մայիս ամիսներին և յետեւ գյուղացիները վորոշել են վերացանել կարկտահար յետո՞վ դաշտը, անհրաժեշտ է հայտնել այդ մո-

սին գործակալին: Այդ դեպքում պետք է պահանջել գործակալից, չտապ կերպով վորոշելու վնասը, ինչպես ասում են չտապ լուծարքերու: Յեթե գյուղացիները չեն ցանկանա վնասը վորոշելու և կ'վերացանեն, այն ժամանակ գործակալը կամ գյուղատնտեսը չեն կարող վորոշել վնասի չափը:

Վերացանում են դանազան պատճառներով: Որինակ ցրտահարությունից, վորդը ուտելուց կամ սերմերի փչացած լինելուց: Միայն կարևոր չե վերացանման պատճառը:

Գարնանը, ապրիլին կարկուտը այնքան ել վնասակար չե: Լինում են դեպքեր, յերբ կարկուտին հարակից լինում է և հեղեղ ու կարկուտը ավելի քիչ վնաս է պատճառում, քան թե հեղեղը: Հեղեղը յերբեմն 10-15 րոպեի ընթացքում ջուր է գոյացնում, վորչափ չի լինում ամբողջ ամառվա ընթացքում և վորողում է ամբողջ ցանքները:

Կարկուտահարության հետ միասին յերբեմն լինում է նաև փոթորիկ: Փոթորիկը ուժեղ կերպով խփում է հասած արտի հասկերը իրար, կոտորաւում է և հատիկները թափում: Մի քանի րոպեից հետո սկսում է տեղալ հորդալատ կարկուտախոն անձրեւ:

Կարկուտը կտրատում է հացահատիկների ցողունները, բայց այդ դեպքում ավելի պակաս վնաս է պատճառում քան թե փոթորիկը:

Պետապը բույսերի ապահովագրությամբ կարկուտահարության վնասի հետ միասին վճա-

րում է նաև փոթորկի ու հեղեղի վնասը: Ինչպես վերեվում ասացինք Պետապը դրա համար բնակչությունից հատուկ ապահովագին չի վեցնում:

Այսպես թե այնպես յեթե ցանքատերը վճռել է կարկուտահար դաշտը վերացանել կամ հնձել վորպես անասունների կեր, ապա ամենից առաջ այդ մասին պիտի տեղեկացնի Պետապի գործակալին: Կ'գա գործակալը կամ գյուղատնտեսը և կ'վորոշի վնասը, վորից հետո միայն ցանքատերը իրավունք ունի վերացանելու կամ հնձելու:

Վերացանելու համար ժամանակը հաշվում է վոչ թե որերով, այլ ժամերով: Ամբողջ հարցը կախված է նրանից, թե արդյոք ժամանակ կա սպասելու գործակալին կամ գյուղատնտեսին թե վոչ: Վորքան քիչ է ժամանակը, այնքան շուտ պիտի հայտնել գործակալին: Պետք է աշխատել այնպես անել, վոր վերացանելուց առաջ գործակալը կամ գյուղատնտեսը տեսնեն վնասված ցանքը:

Ուրիշ բան է յեթե վոչ վոք չի մտածում վերացանելու կամ հնձելու: Այստեղ շտապ լուծարքի կարիք չկա: Իհարկե պետք է հայտնել վոչ ուշ քան 3-րդ որը, բայց գործակալը կամ գյուղատնտեսը կարող են ասլ կարկուտահար յեղած տեղը վոչ ուչ հնձից: Պակայն կարկուտահար յեղած դաշտը մինչեւ վնասի վորոշելը չի կարելի արածուցնել: Յեթե անասունները վորտասակ տան կարկուտահար յեղած ցանքսը, ան-

կարելի կլինի վնասը վորոշել: Ըստ Պետապի կանոնների, սույն կանոնը խախտելու դեպքում Պետապը իրավունք ունի ապահովագրական վարձատրությունը չվճարելու: Մյուս կողմից ցանքատեքը պետք է պաշտպանի կարկտաճար յեղած ծառի կեղևը յուղել և կոտվեցնենք որինակի համար մի ալի, վնասված կարկտաճարությունից ծաղկման չըջանում: Բոլոր ծաղկիկները կարկուտը չի կարող թափել, պտուղներ կլինեն, իհարկե սակավ: Հետեվապես վորոշ ժամանակ հարկավոր է ջրել, կարկտաճար յեղած սամառը կեղևը յուղել և կոտրատված ճյուղերը կտրատել:

Կարկտաճարությունից հետո լավ խնամքի կարիք են գգում վոչ միայն այգիները այլ և բանջարանոցային բույսերը:

Ամեն մի գիտակից ցանքատեք գիտե, վոր ձմեռը չի կարելի վորոշել վնասը, յերբ դաշտերը ծածկված են ձուռով: Մինչդեռ մինչեւ այժմ ել մի քանի դյուղացիներ ամառը պատահած կարկտաճարության մատին լուռ են մինչեւ ձմեռ և անբավական են, վոր Պետապը իր ժամանակին չի վճարում ապահովագրական վարձատրությունը:

Վնասը պիտի վորոշել արդարացի կերպով, վորպեսզի ամեն մի դյուղացի ստանա իր ապահովագրական վարձատրությունը:

Լավ չէ յերբ դյուղացին ստանում է պակաս, լավ չէ նաեւ յերբ դյուղացին ավելի է ստանում:

Ապահովագրական վճարումները հաշված են շատ ճիշտ: Յեթե Պետապը ավելի վճարի մի տարի, 2, 3 տարի, այն ժամանակ նա ստիպված կլինի ավելացնելու կարկտաճարության ապահովագիրը:

Ահա թե ինչու վնասի վորոշումը շատ լուրջ խնդիր է, այստեղ է վոր պետք է 7 շափել, մեկ կտրել:

Յեթե գյուղ է գալիս Պետապի գործակալը կամ գյուղատնտեսը, նա պարտավոր է ամենից առաջ ստուգելու ցուցակով թե ում ցանքան է կարկտաճար յեղել: Ամեն մի վնասվող դյուղացի շահագրգռված է հայտնելու գործակալին, վոր իր ցանքսը կարկտաճար է յեղած:

Այդ ստուգումների ժամանակ հաճախ պարզվում, վոր գյուղացու ցանքսը ցուցակով գրված է 2 դեսյատին, իսկ կարկտաճար է յեղել $2\frac{1}{2}$ դեսյատին: Այդպիսի դեպքերում սովորաբար գյուղացին լուռ է, վորովհետեւ նա գիտե, վոր գյուղատնտեսական միասնակի ցուցակումն էլ 2 դեսյատին է գրված $2\frac{1}{2}$ դեսյատինի փոխարեն: Վոչ վախենալ և վոչ ել վիճել և պետք այդպիսի դեպքերում, այլ պետք է սխալը ուղղել, ցույց տալով ցանքսի ճիշտ տարածությունը:

Ստուգումից հետո գործակալը նայում է ցանքսերը: Գործակալը վնասված ցանքատիրոջ հետ միասին պետք է չըջի և մեկ մեկ նայի բոլոր վնասված ցանքսերը առանձին առանձին:

Գործակալը բոլորը պետք է գրի ակտի մեջ, վորպեսզի վնասը ճիշտ վորոշի: Ցանքսատերը պետք է ոգնի այդ բանում գործակալին: Նա մինչեւ գործակալի գալը պետք է նայի կարկտահար ցանքսը թե վորչափ է վնասված և քանի %:

Յերբ կ'գա գործակալը կամ գյուղատնտեսը այդ բոլորի մասին նա կ'հայտնի նրանց. մնում է միայն ստուգել:

Պետք է այդ նախապատրաստական աշխատանքը կատարել, վորպեսզի ոգնեն գործակալին և կամ գյուղատնտեսին ճիշտ կերպով վորոշելու վնասի չափը:

Գյուղատնտեսը կամ գործակալը նախ նայում են ամբողջ վնասված տարածությունը և ապա վորոշում վնասված ցանքսի դեպատինների թիվը. հետո վորքան է վնասված այս կամ այն ցանքսը:

Գյուղացիների համաձայնությամբ վնասը կարելի չէ վորոշել ամբողջի համար միասին: Այդ արվում է այն դեպքում, յերբ կարկուտը հավասարապես է վնասել. բայց այդ շատ սակավ է լինում: Կարկուտը տեղ տեղ լինում է, խիտ, տեղ տեղ լինում է նոսր, կամ լինում է խոշոր, կամ մանր: Ահա թե ինչու կարող է պատահել, վոր դաշտի մի ծայրում կարկուտը բոլորովին վոչնչացնի ցանքսը, իսկ մյուս ծայրում նրա հետքը հազիվ նկատելի լինի:

Վնասը վորոշելու համար անհրաժեշտ է

գիտենալ թե ցանքսի վոր մասն է վնասվել և վոր մասն է մնում:

Դաշտում ցանքսերին նայելուց հետո, գործակալը կազմում է ակտը՝ վորոշելով ապահովագրական վարձատրության չափը:

Արդարացի և շտապ վնասի վորոշումը շատ հեշտ բան չէ: Պետք է հարցաքննել վնասվողին, լավ լսել նրա պատասխանները և վոր գլխավորն է անձամբ ստուգել թե ճիշտ այդպես է ինչպես ցույց է տալիս վնասվողը: Վնասի վորոշումը պետք է լինի բացահայտ կերպով, վորպեսզի բոլոր գյուղացիները տեսնեն թե այդ ինչպես է կատարվում:

Գործակալը կարող է սխալվել, վորպեսզի սխալներ տեղի չունենան, Պետապը պարտավորեցնում է վնասվող կողմին ունենալ իր ներկայացուցիչը վնասի վորոշման ժամանակ ներկա լինելու:

Այդ տեղյակ անձնավորությունը չպետք է լինի վնասվողներից. նա պետք է անհատապես չահագրգռված չլինի: Այդպիսի մարդ ընտրում է պետապը նաև իր կողմից: Այդ յերկու տեղյակ անձնավորությունները ոգնում են գործակալին կամ գյուղատնտեսին վնասները ներք վորոշելիս:

Ամեն տեսակի բողոքներ ու անբավականություններ վնասի գնահատության մասին պետք է հայտնել Պետապի գործակալին ակտը կազմելու ժամանակ: Գործակալը պարտավոր

և ակտում գրանցել բողոքները, իսկ բողոքողը պարտավոր է ակտում ստորագրել:

Ակտերը ուղարկվում են Հայկոտապի գրասենյակը հաստատելու համար:

Կոպարային ապահովագրության կանոններին համաձայն, Պետապի պարտավոր է վնասը վճարելու ակտը կազմելուց հետո մի ամսը վճարելու: Յեթե լուծարքը շտապ Պետապը պարտավոր է վճարել վնասը վորոշյալ ժամկետից առաջ:

Խոշոր կարկտահարության դեպքում, վրնասված վայրն է գալիս Պետապի տեսուչը. նա շտապ լուծարքի ժամանակ անմիջապես վնասված անտեսություններին վճարում է ապահովագրական վարձատրությունը:

Այդ սրինակ լուծարքի համար գրասենյակը անում է հատուկ կարգագրություն:

Պետապը ինչպես վերելում ասացինք, պարտադիր ապահովագրությամբ ապահովագրում է միայն դեսյատինի բերքի $\frac{1}{3}$ -ը կամ $\frac{1}{4}$ -ը, հետեվապես մնում է չապահովագրված բերքի $\frac{3}{4}$ -ը:

Յեթե կարկուտը անբողջապես վնասել է 1 դեսյատին ցանքս, վորը ապահովագրված է 20 ոուբլով, գյուղացին առնվազն կ'կորցնի 40 ոուբլի:

Պետապը այստեղ ել ընդառաջ է դնացել գյուղացիներին, սահմանելով լրացուցիչ ապագրություն:

Ո՞վ ցանկանում է լրացուցիչ ապահովա-

գրել իր ցանքսը, նա պարտավոր է այդ մասին հայտնել Պետապի գործակալին. ավելի լավ է այդ անել վոչ թե անհատապես, այլ գյուղովի, թե գործակալի համար լավ է և թե գյուղացիների համար հեշտ: Իսկ յեթե ամբողջ գյուղը չի ցանկանում, ցանկացողները պետք է հավաքվեն և ընտրեն իրենց ներկայացուցիչը, վորը խմբակի կողմից կնքում ապահովագրությունը: Այդ ապահովագրությունը կոչվում է խմբակային:

Լրացուցիչ ապահովագրությամբ կարելի է ապահովագրել միջակ բերքը լրիվ արժեքով: Այդ նշանակում է—յեթե 5 տարվա ընթացքում մեկ դեսյատինի միջակ բերքը յեղել է 60 փութ, ապա պիտի ապահովագրել վոչ ավել այդ քանակությունից: Գները պետք է վերացնել վերջին տարվանը: Բայց վորովհետև չուկայի գրները բազմադան են, պետք է վերացնել կոտպերատիվների կամ պետ—հիմնարկների, վորոնք հացահատիկ են մատակարարում:

Լրացուցիչ ապահովագրության մասին պետք է մտածել դեռ ևս գարնանից, վորպեսզի գարնանը ամեն բան լինի պատրաստ: Գարնանը ամեն մի գյուղացի շատ աշխատանք ունի և քիչ դրամ (փող), իսկ կարկուտը չի սպասի:

Բայց պարտադիր և լրացուցիչ ապահովագրություններից կա նաև կամավոր ապահովագրություն կարկտահարությունից:

Կամավոր կերպով ապահովագրվում են ցանքսերը և այլ մշակույթները:

ՀՀ Ազգային գրադարան



NL0957038

$$\frac{7}{2818}$$